

## Սկսնակ աուդիտորների ներգրավման ծրագիր

📌 Եթե ուսանող ես կամ նոր շրջանավարտ և մտածում ես՝ որտեղից սկսել կարիերադ, ապա սկսնակ աուդիտորի այս ծրագիրը ՔՈ հնարավորությունն է:

### Ո՞վ կարող է դիմել\*

Ծրագրին կարող է դիմել յուրաքանչյուր ոք, ով՝

- 1 ՀՀ քաղաքացի է և մշտապես բնակվում է Հայաստանում,
- 2 Բակալավրիատի 3-րդ կամ 4-րդ կուրսի ուսանող է կամ արդեն ունի բարձրագույն կրթության դիպլոմ,
- 3 Գերազանց տիրապետում է հայերենին,
- 4 Վարժ տիրապետում է անգլերենին (առնվազն B2 մակարդակ):

### Ծրագրի մասին

🟢 **Հաշվեքննիչ պալատը** մեր պետության բարձրագույն աուդիտորական մարմինն է: Այս ծրագիրը նպատակ ունի ներգրավել և պատրաստել սկսնակ մասնագետների կատարողականի աուդիտի ոլորտում: Կատարողականի աուդիտը այն գործիքն է, որի միջոցով մենք նպաստում ենք պետությանը գործելու ավելի արդյունավետ՝ ի շահ քաղաքացիների: Մեր աշխատանքը վերաբերում է մարդկանց կյանքի բոլոր կարևոր ոլորտներին՝ առողջապահությունից մինչև կրթություն, մաքուր շրջակա միջավայրից մինչև արդարադատություն, տնտեսական զարգացումից մինչև անվտանգություն, որոնցում կարող ես ունենալ քո իրական ներդրումը:

🟢 **Ծրագրի տևողությունը** մեկ տարի է և բաղկացած է երեք բաղադրիչից.

#### → Դասընթաց.

Իր բովանդակությամբ ՀՀ-ում եզակի այս կրթական դասընթացը մասնակիցներին կտա աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտների (ISSAI) վրա հիմնված համակողմանի գիտելիքներ կատարողականի աուդիտի վերաբերյալ:

#### → Աուդիտորական նախագիծ.

Ծրագրի մասնակիցը կաշխատի իրական աուդիտորական նախագծում՝ որպես թիմի անդամ՝ ներգրավվելով աշխատանքների ընթացքին՝ նախագծի մեկնարկից մինչև ավարտը:

#### → Աուդիտորի որակավորում.

Մասնակիցը կմեկնարկի աուդիտորի որակավորման (ACCA) իր ուղին:

🟢 **Ծրագիրը հաջողությամբ ավարտած մասնակիցները** կստանան Հաշվեքննիչ պալատում ծառայության անցնելու և հետագա կարիերային աճի հնարավորություն:

### 🟢 Վարձատրություն

Ծրագրի ողջ ընթացքում մասնակիցը կստանա ՀՀ-ում գործող **Big10** աուդիտորական կազմակերպությունների սկսնակ մասնագետների միջին աշխատավարձին համարժեք վարձատրություն:

## Ինչպե՞ս դիմել

📧 Այս փուլում անհրաժեշտ է միայն **Դիմում**՝ լրացված կից ձևաչափի համաձայն:

✉️ Դիմումն անհրաժեշտ է ուղարկել [hr@armsai.am](mailto:hr@armsai.am) հասցեին:

🕒 Դիմումների ներկայացման վերջնաժամկետը **2026թ. մարտի 24-ն է**:

## Դիմումից հետո

➡️ **Գրավոր թեստավորում**. Սահմանված պահանջներին համապատասխանող դիմորդները կտեղեկացվեն գրավոր թեստավորմանը մասնակցելու մասին: Այն ներառում է վերլուծական թեստ և անգլերեն լեզվի իմացության ստուգում:

➡️ **Հարցազրույց**. Գրավոր թեստավորումը հաջողությամբ հաղթահարած դիմորդները կտեղեկացվեն հարցազրույցին մասնակցելու մասին:

➡️ **Աշխատանքի առաջարկ**. Հարցազրույցը հաջողությամբ հաղթահարած մասնակիցներին, փաստաթղթերի վերջնական ստուգումից հետո, կառաջարկվի կնքել աշխատանքային պայմանագիր:

## Ո՞ւմ ենք փնտրում

Մենք փնտրում ենք երիտասարդ տաղանդների, ուլքեր.

🔍 Ունեն **հետազոտական** հմտություններ. խորանում են խնդիրների պատճառների մեջ, փնտրում ու գտնում դրանց լավագույն լուծումները.

🇺🇸 Ունեն **վերլուծական** հմտություններ. կարողանում են աշխատել թվերի ու տվյալների հետ, վեր հանել օրինաչափություններ.

💬 Ունեն լավ **հաղորդակցման** հմտություններ. գրավոր և բանավոր ուղերձները արդյունավետորեն հասցնում են դիմացինին.

📌 **Պատասխանատու են ու կարգապահ** իրենց վերապահված գործում.

👉 **Թիմային** աշխատող են.

🚀 Դրևսորել են **կրթության** ու ինքնազարգացման ընդգծված հանձնառություն.

🇸🇪 Մոտիվացված են ծառայելու իրենց պետությանը՝ մասնագիտական, ապաքաղաքական աշխատանքով և դրական փոփոխություններ բերելու քաղաքացիների կյանքում:

\* Ծրագրի մասնակիցը պետք է չունենա դիմումի ձևում նշված սահմանափակումները:

📍 **Աշխատավայր՝** ք. Երևան, Բաղրամյան 19:

**Հարցերի դեպքում** կարելի է դիմել.

✉️ [hr@armsai.am](mailto:hr@armsai.am)

☎️ +374 11 888 145, +374 11 888 123